

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆՈՆ ԳԻՐՔԵՐԸ

Ս. Գրոց ընդունելի եւ կանոնական
յրբերը որոշելու համար, Հայց. եկեղեցւոյ
մէջ պաշտօնապէս առաջին անգամ ըլլալով
Սիոն Ա. Բաւոնացի Կաթողիկոսի (767-775)
երկրորդ տարին գումարուեցաւ Պարտաւի
Ժողովրդ, երկու ազգերու՝ Հայոց եւ Աղ-
ւանից եպիսկոպոսներէ եւ իշխաններէ
բաղկացած (Ազգապատում, Գլ. 605, էջ
881: Յր. Մուրատ, Գլ. Թ., էջ Մ2):

Պարտաւի 24 կանոններուն վերջինը Հին
Կտակարանի եւ Ս. Գրքերուն կանոնը կու
տայ: Այսպէս, Մովսէսի Հնգամատեանը՝
1.— Ծնունդը, 2.— Ելք, 3.— Ղեւտականք,
4.— Թիւք, 5.— Երկրորդ Օրէնք, Ապա՝
6.— Յետու Նաւեայ, 7.— Դատաւորք, 8.—
Հռութ. 9.—12.— Թագաւորութեանց չորս
գրքեր, 13.—14.— Մնացորդաց աւուրքն՝
երկու, 15.—16.— Եղբի բանքն՝ երկու,
17.— Գիրք Յովբայ, 18.— Սաղմոսք, 19.—
21.— Սողոմոնի երեք գիրք, 22.—33.— Եր-
կտաւան Մարգարէք, 34.— Եսայի, 35.—
Երեմիա, 36.— Եղեկիէլ, 37.— Դանիէլ:

Այս կանոնին մէջ մի քանի գրքեր կը
պակսին, զորս Հայց. եկեղեցին այժմ իբր

կանոնական կ'ընդունի: Ասոնք են՝ 1.— Նէ-
եմի, 2.— Եսթեր, 3.— Յուդիթ, 4.— Տով-
բիթ, 5.—7.— Մակաբայեցւոց երեք գիրք,
8.— Իմաստութիւն Սողոմոնի, 9.— Սի-
բաք: Իսկ Բարուքն ու Երեմիայի Ողբը Ե-
րեմիայի գրքին հետ կրնան միացած ըլլալ:
Պարտաւի Ժողովին ցուցակին մէջ ինչ-
ւած 9 Ս. Գրքերը Երկրորդականոն կոչ-
ւածներն են, որոնք Հրէական կամ Եղբի
կանոնին մէջ չեն մտած, եւ զորս այժմեան
Բողոքականներն ալ նախընտրած են կա-
նոնէ դուրս հանել:

Բայց թէ ինչո՞ւ Պարտաւի Ժողովէն մեզ
չեն հասած եւ չեն յիշուած Նոր Կտակարանի
կանոնական Ս. Գրքերը զորս խոստացած
էին ինչի՞նչ անհասկնալի կը մնայ:

Այս Ժողովէն յետոյ Հայց. եկեղեցւոյ
կամ Հայրապետութեան կողմէ չունինք ու-
րիշ պաշտօնական Ժողով մը որ վճռա-
կանօրէն սահմանած եւ կանոնած ըլլալ թիւն
ու անունը Աստուածաշունչի ընդունելի Ս.
Գրքերուն:

Ստորեւ կը ներկայացնենք Աստուածա-
շունչի կանոնական Ս. Գրքերու զանազան
ցանկեր.—

Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Ջ Ի Ն (Ըստ Լատգիկեայ Ժողովին)

«Այս են բաժանորդակ գիրք Հին Կտակա-
րանի, զորս արժան է հրապարակու ըն-
թեանը.—

1.— Ծն., 2.— Ել., 3.— Ղեւ., 4.—
Թիւ., 5.— Երկ., 6.— Յետ., 7.— Դատ.
եւ Հռութ, 8.— Եսթ., 9.— 1 եւ 2 Թագ.,
10.— 3 եւ 4 Թագ., 11.— 1 եւ 2 Մն., 12.—
1 եւ 2 Եղբ., 13.— Սղ., 14.— Առ., 15.—

Ժող., 16.— Երգ., 17.— Յոր., 18.— ԺԲ
Մարգարէք, 19.— Ես., 20.— Եր. եւ Բա.,
Ող. եւ Թուդթ, 21.— Եղ., 22.— Դն.:


Իսկ Նոր Կտակարանի գրքերն են հետեւ-
եալները.—

Չորս Աւետարաններ. Մթ., Մկ., Ղկ.,
ԹՀ., ԳԺ., 7 Կաթողիկեայ Թուդթեր, Թկ.,
1 եւ 2 Պա., 1, 2, եւ 3 ԹՀ., Եղ., 14 Թուդ-

Թեր Պողոսի Հո., 1 եւ 2 Կր., Գղ., Եփ.,
Փայ., Կղ., 1 եւ 2 Թեա., Եբ., 1 եւ 2 Տժ.,
Տա., Փմ.:

Այս առաջին, պաշտօնական ցուցակն է

Ս. Գրոց որ ամբողջովին կը միաբանի Կիւ-
րեղ Երուսաղէմացի | Հայրապետի յօրինած
ցանկին հետ:



«Աստուածաշունչ», Անդերտաւ, 1686:

Յ Ա Ն Կ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

(Ըստ Մեծն Աթանասի, Դ. Դար)

Առաջին հայրապետն է որ իր «Ձառակա-
կան Թղթին» մէջ լճիւ տալով կարգաւո-
րած է թիւն ու անունը Հին եւ Նոր Կտակա-
րաններու ընդունելի Սուրբ Գրքերուն,
զորս կոչած է ընթերցեալս կամ զընթերցե-
լիս յեկեղեցւոյն:

Ս. Աթանաս Հայրապետ խորութիւն չէ
զրած Կանոնականներու եւ Երկրայական

ներու միջեւ, այլ այսպէս կը թուէ Նոր
Կտակարանի Ս. Գրքերը.

Ձորս Աւետարան՝ Մթ., Մկ., Ղկ.,
ԹՀ., Գծ., Կաթողիկեայք կոչուած եօթը.
Թուղթեր՝ Յկ., 1 եւ 2 Պտ., 1-3 ԹՀ., ԹԴ.,
այլա՝ տամաշորս Թուղթերը Պողոսի՝ Հո.,
1 եւ 2 Կր., Գղ., Եփ., Փայ., Կղ., 1 եւ 2
Թեա., Եբ., 1 եւ 2 Տժ., Տա., Փմ., եւ

դարձեալ Յովհաննու Յայտնութիւնը՝ Ապա ուրիմն, Աթանասի կանոնը ըստ բովանդակութեան կը ներկայացնէ ճշդիւ այսմեան

ընդունում Նոր Կտակարանը (27 Մ. Գրքեր) :

Ց Ա Ն Կ Ե Ր Ր Ո Ր Գ

(Ըստ Ամսնիայի Շիրակումայ, Է. Դար)

Թիւ Որչափութեանց Հին Կտակարանաց (Ըստ Ձեռ. Թիւ 773, Է Մատենադարանի Կանոնց Սրբոց Յակոբեանց յերուսաղէմ, Է Թուին 1359) :

Դիր Մովսիսի Օրէնսդրի՝ Ա.— 1.— Մըննդոց, տունք են Դիւթի (4307), 2.— Ելիցն, ունի տունք Գիւն (3400), 3.— Ղեւտացոյցն, տունք Բիւ (2700), 4.— Թըւոցն, տունք Գիւն (3533), 6.— Երկրորդ Որինացն, տունք Գիւն (3100) :

Բ.— Յետուայ որդւոյ Նաւեա, տունք ունի Բիւն (2100), Դատաւորացն տունք Բիւն (2150), Հոռութայ տունք Գն (300) :

Գ.— Թաղաւորութեան Ա. Բիւն (2500), Թաղաւորութեան Բ. Բիւն (2432), Թաղաւորութեան Գ. Բիւն (2500), Թաղաւորութեան Դ. Բիւն (1600) :

Դ.— Մնացորդացն Առաջին, Բիւն (2150), Մնացորդացն Երկրորդ, Գիւն (3000) :

Ե.— Մակարայեցոց Առաջին Բիւն (2525), Մակարայեցոց Երկրորդ Բիւն (2008), Մակարայեցոց Երրորդ Չ (750),

Մակարայեցոց Չորրորդ Բիւն (1100) :

Չ.— Երկոտասան Մարգարէիցն Գիւն (3301), Է.— Եսայայ, տունք Գիւն (3820), Ը.— Երեմիայ, տունք Գիւն (3800), Բարուբայ, տունք Յի (350), Ողբ Երեմիայի, տունք Յի (360), Թուղթ Նորին, տունք Յի (350), Թ.— Եղեկիէի, տունք Դի (4000), Ժ.— Դանիէի, տունք Բիւն (1750), ԺԱ.— Սաղմոսարանին, տունք Եիւն (5100), ԺԲ.— Առակն Սողոմոնի, տունք Բիւն (1750), Եկէլիաստես, տունք Ձի (707), Աւրնութիւն Աւրնութեանցն (Երգ երգոյ) ՄԳ (286), Իմաստութիւն Սողոմոնի, տունք Ի (20), ԺԳ.— Յովբայ, տունք Բիւն (1600), Սիրաբայ, տունք Բիւն (2800), ԺԴ.— Առաջին Եղբի, տունք Բի (1300), ԺԵ.— Երկրորդ Եղբի, տունք Բի (1800), Բան Նեհեմայ, ԺԶ.— Եսթերայ, տունք Չի (750), ԺԷ.— Տուրիթայ, տունք Չի (750), ԺԸ.— Յուդիթայ, տունք Բի (1300) :

Համանգամայն Հին Կտակարանի տունքն են Թիւն (9129) :

Նորին Թիւն Որչափութեանց Նոր Կտակարանաց.

Աւետարանացն՝ Ա.— Մատթէոսի, տունք, Բիւն (2600), Մարկոսի, տունք Բիւն (1600), Ղուկասու, տունք Բիւն (2800), Յովհաննու, տունք Բիւն (2300), Բ.— Գործք Առաքելոցն Բիւն (2800), Գ.— Կաթողիկէ Թու (ղ)թ Է (7), 1.— Յակոբու Թուլթն Գն (300), 2.— Պետրոսի առաջին Թուլթ Գն (300), 3.— Պետրոսի երկրորդ Թուլթն տունք Բն (200), 4.— Յովհաննու Առաջին Թուլթ ՄԿ (260), 5.— Յովհաննու երկրորդ Թուլթ ՄԶ (56), 6.— Յովհաննու երրորդ Թուլթ ԼԵ (35), 7.— Յուդայի Թիւլթն տունք ԿԼ (68), Դ.— Յայտնութեան Յովհաննու, Ե.— Պաւլոսի Առաքելոյ Թուլթ ԺԴ (14), Հոռայեցոց Թիւլթն տունք Չի (950), Կորնթացոց Առաջին Թուլթ Պիւ (842), Կորնթացոց երկրորդ

Թուլթ Ո (600), Դաղատացոց Թիւլթն տունք ՅԺԲ (312), Եփեսացոց Թիւլթն ՅԺԲ (312), Փիլիպեցոց Թիւլթն տունք Մ (200), Կողոսացոց Թիւլթն տունք Գն (300), Թեսալոնիկեցոց Թուլթ առաջին ՅԺԲ (312), Նորին երկրորդ Թուլթ Չի (150), Եբրայեցոց Թիւլթն տունք Չի (750), Տիմոթէայ առաջին Թիւլթն տունք Մի (220), Նորին երկրորդ Թուլթ ՉԶ (180), Տիմոթէ Թիւլթն տունք ԼԶ (96), Փիլիմոնի Թիւլթն տունք ԽԱ (41) :

Համանգամայն Նոր Կտակարանի տունքն են ԼԵՂԱ (8951) : Որ եւ նոյնն է Համանգամայն Չի կանոնաց Երկրորդ Անտիոքայ, (Յրէստէրի Մուրատ, էլ ՄԶԹ եւ ՄԶԹ) :

Յ Ա Ն Կ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

(Ըստ Յովհաննէս Խմատաւէր Սարկաւազ վարդապետի ԺԲ. Դար)

ԺԳ. դարու պատմիչ Մխիթար Այրիվանցի իր Ժամանակագրական Պատմութեան մէջ անցուցած է այսպէս. «Իսկ ըստ գրութեան Կղեմայ (Հռոմայեցի, Ա. դար) որպէս եղիտ» (Որուն Հետեւելով քաղած էր Յովհաննէս Խմատաւէր Սարկաւազ):

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Հռոմայեցոցն, Կորնթացի Ա., Կորնթացի Բ., Կորնթացի Գ., Գաղատացոցն, Եփեսացոցն, Փիլիպեցոցն, Կողոսացոցն, Թեսաղոնիկեցոցն Ա., Թեսաղոնիկեցոցն Բ., Եբրայեցոցն, Տիմոթեայ Ա., Տիմոթեայ Բ., Տիտոսին Կրեապոլայ, Փիլիմոնին (Իսկ Զորս Աւետարաններն ու Գործք Առաքելոցը, որոնք չէ յիշած, թերեւ որպէս ծանօթ եւ ընդունուած նկատած է):

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Եւ Գիրք Մովսէսի՝ Արարածքն, Էքն, Ղևտացոցն, Թիւքն, Երկրորդ Օրէնքն, Յետո Նաւէն, Դատաւորք Իսրայէլի, Հրուսթ Մովարայ, Առաջին Թագաւորութիւնը,

Նըն, Երկրորդ Թագաւորութիւնն, Երրորդ Թագաւորութիւնն, Զորրորդ Թագաւորութիւնն, Առաջին Մնացորդք, Երկրորդ Մնացորդք, Երրորդ Մնացորդք, Առաջին Եղբայն, Երկրորդ Եղբայն, Առաջին Մակարէ, Երկրորդ Մակարայեցի, Երրորդ Մակարայեցի, Զորրորդ Մակարայեցի (ունի նաեւ Անանիա Շիրակացին), (Յովսէպոսն^(*) որ է Կայսրական Քահանայապետ, Ենովբայ Տեսիլն^(*), Կտակքն Նախահարցըն^(*), Ասանիթի աղօթքն^(*) Տուրիթն Ա., Յուդիթն Ա., Եսթերն Ա., Եղբ Սաղաթիէլ, Յուն, Երկոտասանքն, Սաղմոսն Դաւթի, Առակքն (Առ., Ժող., Երգ., Իմաստ.), Եսային, Երեմիայն, Եղեկիէլն, Դանիէլն, Մնացորդքն, Վասն Երեմեայ ի Բա, Կոն, (Ողբը կամ Թուղթ Երեմիայ) Մահ մադարէիցն^(*), Յետո Սիրաբ:

(*) Միայն այս ցանկին մէջ կը համընկնին անոնք:

Յ Ա Ն Կ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

(Ըստ Գրիգոր Տաքեւացիի, Հայոց եղամեծ վարդապետի)

Հին Կտակարան՝ 1.— Մովսէսի Առաջին՝ Արարածք, 2.— Մովսէսի Երկրորդ՝ Ելք, 3.— Մովսէսի Երրորդ՝ Ղևտականք, 4.— Մովսէսի Զորրորդ՝ Թիւք, 5.— Մովսէսի Հինգերորդ՝ Երկրորդ Օրէնք, 6.— Յեսու, 7.— Դատաւորք, 8.— Հռութ, 9.— 12.— Թագաւորութեանց չորս գիրք, 13.— 14.— Երկու Մնացորդայ, 15.—16.— Երկու Եղբայն, 17.— Նէեմի, 18.— Եսթեր, 19.— Յուդիթ, 20.— Տուրիթ եւ Տուրիթ, 21.— 22.— Մակարայեցոց երեք գիրք, 24.— Սաղմոս, 25.— Առակ Սողոմոնի, 26.— Ժողովոյ Սողոմոնի, 27.— Երգ Երգոց Սողոմոնի, 28.— Իմաստութիւն Սողոմոնի, 29.— Սիրաբ, 30.— Յոբ, 31.— Եսայի:

Տասներկու Մարգարէներ՝ 32.— Ովսէէ, 33.— Ամովս, 34.— Միքիա, 35.— Յովէլ, 36.— Աբդիու, 37.— Յովնան, 38.— Նաւուս, 39.— Ամբակում, 40.— Սոփոնիա,

41.— Անդէ, 42.— Զաքարիա, 43.— Մադաբա, 44.— Երեմիա, 45.— Բարուք, 46.— Ողբք, 47.— Դանիէլ, 48.— Եղեկիէլ, 49.— Եւ վերջին կտակը:

Տասներկու փոքր Մարգարէներու զբերք մէկ գիրք կը համարուին եւ Հետեւալար Երեսունվեց (36) գիրք կ'ըլլայ բովանդակ Հին Կտակարանը:

Նոր Կտակարանը՝ յայտնի է. 1.— Մատթէոսի Աւետարան, 2.— Մարկոսի Աւետարան, 3.— Ղուկասու Աւետարան, 4.— Յովհաննու Աւետարան, 5.— Յովհաննու Տեսիլ (Յայտնութիւն), 6.— Եւ ննջում Վերջն եղբայրն սկսուածքով, 7.— Գործք առաքելոց եւ Խօթք Թուղթ Կաթողիկէք, 8.— Յակոբայ Թուղթ, 9.—10.— Պետրոսի երկու Թուղթեր, 11.—12.—13.— Յովհաննու երեք Թուղթ, 14.— Յուդայի Տեառնեղբոր Թուղթ, 15.— Պողոսի Հռովմայեցոց

Թուղթ, 16.-17.— Պողոսի Կորնթացւոյ
Թուղթեր, 18.— Պողոսի Գաղատացւոյ
Թուղթ, 19.— Պողոսի Եփեսացւոյ Թուղթ,
20.— Պողոսի Փիլիպպեցւոյ Թուղթ, 21.—
Պողոսի Կողոսացւոյ Թուղթ, 22.-23.— Պո-
ղոսի երկու Թեսաղոնիկեցւոյ Թուղթեր,
24.— Պողոսի Եբրայեցւոյ Թուղթեր, 25.—
26.— Պողոսի երկու Տիմոթէոսի Թուղթեր,
27.— Պողոսի Տիտոսի Թուղթ, 28.— Պո-
ղոսի Փիլիմոնի Թուղթ, 29.— Կորնթացւոյ
երրորդ Թուղթը (Հին առնէ եղած է, իսկ
չեբրկայի՝ ոչ), 30.— եւ Թադէոսի (որ
չեբրկայի չկայ) :

Կղէմ եւ Անանիա Դամասկացի Հայրա-
պետների կ'ըսեն թէ 6 Գիրք եւս ընդունե-
ցին Եկեղեցւոյ մէջ: Անոնք են.

31.— Ընթերցուածն Յակոբայ, 32.—
33.— Երկու Կանոններ Առաքելներու,
34.— Բանք Յիսուսի, 35.— Գիրք Դիոնիս-
եայ Արիսպագաւոյ (Գործք Առաք. Ժէ.
34), 36.— եւ Քարողութիւն Պետրոս Առաք-
եայի :

Ինչ որ կ'ըլլայ երեսունվեց (36) գիրք:
Բովանդակ Աստուծաշունչը՝ Եօթնա-
սուներկու (72) :

Յ Ա Ն Կ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

(Ըստ Ոսկան Երեւանցիի առաջին տպագրութեամբ, 1666)

Հին Կտակարան՝ 1.— Եննդոց, 2.— Ե-
ւթ, 3.— Ղեւտացւոց, 4.— Թուոց, 5.—
Երկրորդօրէն, 6.— Յեսուայ, 7.— Դատա-
ւորաց, 8.— Հռութ, 9.— Թաղաւորու-
թեանց Ա, 10.— Թաղաւորութեանց Բ,
11.— Թաղաւորութեանց Գ, 12.— Թաղա-
ւորութեանց Դ, 13.— Մնացորդ Նախորդ,
14.— Մնացորդ Երկրորդ, 15.— Եզրաս Ա-
ռաջին, 16.— Եզրաս Երկրորդ (ըստ Լատի-
նացւոց՝ Առաջին), 17.— Տուբիթ, 18.—
Յուդիթ, 19.— Եսթեր, 20.— Յոբ, 21.—
Գիրք Սաղմոսաց, 22.— Առակք Սաղմոնի,
23.— Ժողովող, 24.— Երգ Երգոց, 25.—
Գիրք Իմաստութեան, 26.— Ժողովող, որ է
Սիրաք, 27.— Եսայեայ Մարգարէի, 28.—
Երեմիայի (նաեւ Ողբք), 29.— Բարուքայ,
30.— Եղեկիէղի, 31.— Դանիէղի, 32.—
Օվսեայ, 33.— Յովհեայ, 34.— Ամոլայ,
35.— Արդիոս, 36.— Յօնանոս, 37.— Միք-
իայ, 38.— Նաւումայ, 39.— Աբրահամայ,
40.— Սօփոնիայ, 41.— Անգեայ, 42.— Զա-
քարիայի, 43.— Մաղաքիայի, 44.— Մա-
կաբայեցւոց Առաջին, 45.— Մակաբայեց-
ւոց Երկրորդ, 46.— Մակաբայեցւոց Եր-
րորդ, 47.— Եզրաս Երրորդ (ըստ Լատի-
նացւոց՝ Երկրորդ), 48.— Եզրաս Զորրորդ

(կ'ըսուի նաեւ Գիրք Նէեմեայ) :

Մինչեւ այստեղ 50-էն երկու պակաս
կ'ընէ, առանց միացնելու Թագաւորու-
թեանց չորս, եւ փոքր Մարգարէներու 12
գրքերը :

Նոր Կտակարան՝ 1.— Սրբոյ Աւետա-
րանի Մատթէոսի, 2.— Ս. Աւետ. Մարկո-
սի, 3.— Ս. Աւետ. Ղուկասու, 4.— Ս.
Աւետ. Յովհաննու, 5.— Գործք Առաքե-
ւոց :

Թուղթք Պողոսի Առաքելոյ 6.— Առ Հռո-
մայեցիս, 7.— Առ Կորնթացիս Ա, 8.— Առ
Կորնթացիս Բ, 9.— Առ Գաղատացիս,
10.— Առ Եփեսացիս, 11.— Առ Փիլիպպե-
ցիս, 12.— Առ Կողոսացիս, 13.— Առ Թե-
սաղոնիկեցիս Ա, 14.— Առ Թեսաղոնիկեցիս
Բ, 15.— Առ Տիմոթէոս Ա, 16.— Առ Տի-
մոթէոս Բ, 17.— Առ Տիտոս, 18.— Առ Փի-
ղիմոն, 19.— Առ Եբրայեցիս :

Թուղթք Կաթողիկեայց 20.— Յակո-
բու, 21.— Պետրոսի Ա, 22.— Պետրոսի Բ,
23.— Յօնանոս Ա, 24.— Յօնանոս Բ,
25.— Յօնանոս Գ, 26.— Յուդայի, 27.—
Տեսլանքն Յօնանոս :

Նոր Կտակարանի բովանդակ գրքերն են
քսանեօթ (27) :

ԴԱՆԻԷԼ ՎՐԴ. ՇԱՄԼԵԱՆ